ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

ՏՆՕՐԵՆ Ն.Ա.ՍԱՀԱԿՅԱՆ

ԿՏ

Քննարկվել է մանկավարժական խորհրդի

2022թ. օգոստոսի 31-ի նիստում

ՀՀ ԿԳՄՄՆ

«ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԻԲՈՅԵԴՈՎԻ ԱՆՎԱՆ № 11 ԱՎԱԳ ԴՊՐՈՅ»ՊՈԱԿ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՊԼԱՆ

/2022-2023 ուստարի/

Դաստիարակչական աշխատանքների նպատակներն ու խնդիրները

1. Ձևավորել մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության և մարդասիրության ոգով դաստիարակված,ինքնուրույն մտածող,ստեղծագործող,մարդասեր անձ,որն ընդունակ լինի գնահատել և հարգել ինչպես իրեն,այնպես էլ ուրիշներին:
2. Դպրոցում բարեկիրթ միջավայրի հաստատումը, որը կնպաստի երեխայի անձնավորության զարգացմանը, նրա կողմից արժեքային համակարգի ընտրությանը:
3. Հիմնավոր վճիռներ կայացնելու ընդունակությունների և դրանք տարբեր ոլորտներում իրականացնելու պատասխանատվության զարգացումը:
4. Հանդուրժողական անձնավորության զարգացումը՝ լինել նրբազգաց, պատասխանատու, գնահատել սեփական ազատությունը, ընկալել այլ մշակույթները, հարգել մարդկային արժանապատվությունը և անհատականությունը:
5. Ուժեղացնել դաստիարակչական համագործակցությունը ուսումնական և արտաուսումնական գործընթացների միջև:
6. Աշակերտների մարդասիրական աշխարհայացքի ձևավորումը, որի շնորհիվ նրանք կկարողանան կառուցել կյանքը գիտակից ձևով և զարգանալ բարոյապես:
7. Աշակերտների հաղորդակցումը ազգային մշակույթին, լեզվին, ավանդույթներին և սովորույթներին, ընդհանրապես հարազատ ժողովրդի հոգևոր արժեքներին, համաշխարհային մշակութային արժեքների ճանաչում :
8. Ֆիզիկական զարգացում, հիգիենիկ մշակույթ, մարդկանց հետ շփման կանոնների պահպանում:
9. Մշտապես կարևորել ինքնադաստիարակությունը, աշխատանքները կազմակերպել այնպես, որ աշակերտի մոտ կատարելագործվելու, ավելի լավը դառնալու ցանկություն առաջանա:
10. Ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ աշակերտների միմյանց հետ հաղորդակցվելու և համագործակցելու համար դրական միջավայր ստեղծելու նպատակով:
11. Ելնելով ավագ դպրոցի առանձնահատկություններից՝ կարևորել աշակերտների մասնագիտական կողմնորոշմանն ուղղված քայլերը:
12. Ապահովել աշակերտների մասնակցությունը համայնքային միջոցառումներին ու հիմնախնդիրների լուծմանը: Ուժեղացնել դաստիարակչական համագործակցությունը ուսումնական և արտաուսումնական գործընթացների միջև:
13. Պահպանել և զարգացնել դպրոցի ավանդույթները:
14. Ամրապնդել համագործակցությունը ծնողական հասարակայնության հետ:
15. Զարգացնել ռազմահայրենասիրական գործունեությունը:
16. Շարունակել էքսկուրսիոն- երկրագիտական աշխատանքները:
17. Աշակերտների մեջ արմատավորել գիտակցված վերաբերմունք դեպի աշխատանքը:

18.Ձևավորել առողջ ապրելակերպի կարևորման հմտություններ , ինչպես նաև դրանք գործնականում կիրառելու կարողություններ :

19.Սովորողների կողմից սեփական ունակությունների, հակումների, իրատեսական գնահատման կարողությունների ձևավորումը

20.Տարբեր մասնագիտություններին (մասնագետների գործնական և անձնային որակներին) ներկայացվող ընդհանրական պահանջների իմացությունը:

21.Առանձին մասնագիտությունների կամ աշխատանքային գործունեության բնագավառների առանձնահատկությունների վերաբերյալ գիտելիքների հարստացումը և իրազեկության ապահովումը դպրոցական ծրագրի սահմաններում, սովորողներին մատչելի չափով և միջոցներով:

22.Սովորողների շրջանում դպրոցական որակյալ կրթության կարևորության ամրապնդումը, շեշտադրումը՝ աշխատանքային շուկայում իրենց գործողությունների ազատությունն ու ճկունությունն ապահովելու համար:

23.Մոնիթորինգի ենթարկել, վերլուծել կատարված դաստիարակչական աշխատանքները, բացահայտել առկա խնդիրները, պայքարել բացթողումների և թերացումների դեմ:

Այս խնդիրների և նպատակների իրականացումը ենթադրում է՝

1. Անձնավորության լիարժեք զարգացման, նրա կյանքի և առողջության պահպանման բարենպաստ պայմանների և հնարավորությունների ստեղծում:
2. Սոցիալական կարևոր գործունեության տարբեր բնագավառներում ստեղծագործական ակտիվության դրսևորման և խթանման պայմանների ստեղծում:
3. Անընդհատ կրթական համակարգի զարգացում. կրթական մակարդակների և աստիճանների հաջորդականություն. հետազոտական և նախագծային գործունեության սատարում:
4. Մանկավարժական նոր տեխնոլոգիաների և մեթոդների արմատավորումը և կիրառումը գործնական աշխատանքներում:
5. Աշակերտական ինքնավարության տարբեր ձևերի զարգացում:
6. Լրացուցիչ կրթության համակարգի հետագա զարգացումը և կատարելագործումը դպրոցում:
7. Դաստիարակչական համակարգի բոլոր օղակների գործունեության և համագործակցության կոորդինացում՝ բազային և լրացուցիչ կրթություն, դպրոցը և հասարակությունը, դպրոցը և ընտանիքը:
8. Համադպրոցական դաստիարակչական խնդիրը /հանդուրժողական մտածողության մշակույթի ձևավորման դաստիարակչական ապահովումը/:

Աշխատանքի հիմնական ուղղությունները

1. Աշակերտների հայրենասիրության, քաղաքացիականության և հանդուրժողական մտածողության մշակույթի դաստիարակումը:
2. Ուսուցիչների հանդուրժողական մտածողության մշակույթի զարգացումը:
3. Ուսուցիչ- աշակերտ արդյունավետ համագործակցության ապահովումը:
4. Ալկոհոլի, ծխախոտի, թմրամիջոցների և հոգեմետ նյութերի օգտագործման կանխարգելման ուղղությամբ իրականացված ուսումնական ծրագրերի և միջոցառումների իրականացում:
5. Անչափահասների շրջանում հանցավորության կանխարգելման և նվազեցմանն ուղղված միջոցառումներ:
6. Հաստատությունում սովորողների իրավագիտակցության բարձրացման , իրավունքների տեղեկացվածության և իրավունքների պաշտպանությանն ուղղված միջոցառումներ:
7. Դպրոց – ընտանիք կապի ամրապնդում և տեղեկատվական ու կանխարգելիչ միջոցառումներ:
8. Սովորողների առողջության պահպանմանն ուղղված տեղեկատվական և գործնական միջոցառումների անցկացում:
9. Աշակերտների ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումներում ընգրկված լինելու հնարավորությունների մեծացում:
10. Դաստիարակել քաղաքացիական դիրքորոշում և պատասխանատվություն բնական միջավայրի նկատմամբ :

Աշակերտի ակնկալվող բնութագիրը

1. Յուրացրել է չափորոշչային պահանջները:
2. Ունի ազատ և քննադատական մտածողություն,վերլուծական միտք:
3. Հետևում է իրավահավասարության սկզբունքներին, մարդկանց հետ փոխհարաբերություններում հանդուրժողականությանը :
4. Քաղաքացի և հայրենասեր, որը կատարում է իր սոցիալական բոլոր դերերը՝ ընտանիքի անդամի, իր քաղաքի բնակչի, հայրենիքի քաղաքացու, աշխարհի մարդու:
5. Կողմնորոշված է դեպի հումանիստական արժեքները:
6. Ինքն է պատասխանատու կյանքի՝ իր ընտրած ուղու համար:
7. Ունի սեփական կարծիք և խելամիտ հիմնավորումներ հասարակական այս կամ այն երևույթի վերաբերյալ:
8. Գնահատում և ճանաչում է ազգային արժեքները:
9. Կազմակերպված է և օրինապահ, հստակ գիտակցում է իր առջև դրված խնդիրները, կառողանում է ձևակերպել իր նպատակները և դրանց իրականացմանն ուղղված քայլերը:
10. Գիտակցում է իր պատասխանատվությունները:

Դաստիարակչական աշխատանքի հիմնական տեսակները

1. Դպրոցական ավանդական միջոցառումների շարքը:
2. Աշակերտական ինքնավարության կազմակերպում և իրականացում /աշխորհրդի, առաջարկների ձևով /:
3. Մասնակցությունը քաղաքային, մարզային և հանրապետական միջոցառումներին:
4. Էքսկուրսիոն-երկրագիտական գործունեությունը:
5. Ռազմահայրենասիրական գործունեությունը:
6. Առարկայական միամսյակները:
7. Դպրոցական օլիմպիադաները:
8. Աշխատանքը խնդրահարույց երեխաների հետ:
9. Ծնողների և դպրոցի համագործակցությունը:
10. Թեմատիկ պաստառների պատրաստում, վահանակների ձևավորում
11. Ըստ անհրաժեշտության հանդիպումների անցկացում լիազոր անձանց հետ:
12. Համագործակցություն ՀԿ-ների և այն կառույցների հետ, որոնց աշխատանքը միտված է կրթական ծրագրերի և դաստիարակչական խնդիրների լուծմանը:
13. Հանդիպումների կազմակերպում Գուգարաց հոգևոր թեմի ներկայացուցիչների հետ, մասնակցություն համաթեմական երթերին և այլ միջոցառումներին:
14. Համագործակցություն՝ հայ-ռուսական կապերի ամրապնդման նպատակով՝ հաշվի առնելով դպրոցում ռուսալեզու դասարանների առկայությունը:
15. Հանդիպումներ, կլոր սեղաններ տարբեր մասնագիտությունների տեր մարդկանց հետ :
16. Այցելություններ բուհեր, միջին մասնագիտական հաստատություններ:
17. Հայտարարությունների անկյան ստեղծում /օգտակար կայքեր, ուսումնական նորություններ, նախաձեռնություններ/

№	Աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Պատասխանատու	Ծանոթություն
1	2	3	4	5
Ա	**1.Պարտադիր կրթության կենսագործունեություն** *Կորոնավիրուսային հիվանդության վարակի տարածումը կանխարգելելու նպատակով ուսումնակրթական գործընթացն իրականացնել «Կորոնավիրուսային հիվանդությունների պայմաններում հանրակրթական ուսումնական հաստատություններում գործունեության կազմակերպման ուղեցույց»-ի սահմանված կանոնների պահպանմամբ:* Անցկացնել երեխաների հաշվառում դպրոցի սպասարկման տարածքում:	Սեպտեմբեր	Տնօրեն ՄԿԱ գծով տեղակալներ Տնտես.գծով տեղակալ Դասղեկներ	
Բ	Հնարավորության սահմաններում սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին ապահովել դասագրքերով և գրենական այլ պիտույքներով:	Սեպտեմբեր	Տնօրեն ՄԿԱ գծով տեղակալներ	
Գ	Կատարել միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ երեխաների հաշվառում:	Սեպտեմբեր	Տնօրեն ՄԿԱ գծով տնօրենի տեղակալներ ԾԽ	

	Ցուցաբերել օգնություն:			
Դ	Սահմանել վերահսկողություն պարբերաբար ուշացումների և անհարգելի բացակայությունների նկատմամբ, ժամանակին կանխել դրանք, անհրաժեշտության դեպքում առաջնորդվել օրենքով սահմանված կարգով:	Ուստարվա ընթացքում	ՄԿԱ գծով տեղակալներ	
Ե	Ուշադրության կենտրոնում պահել ցածր առաջադիմություն ունեցող աշակերտներին այն հաշվով,որ բոլորն էլ ընդգրկվեն դպրոց: Նրանց հետ իրականացնել լրացուցիչ՝աշխատանքներ /միկրոծրագրեր/:	Ուստարվա ընթացքում	ՄԿԱ և ուսումն. գծով տեղակալներ Դասղեկներ Առարկայի ուսուցիչներ	
Զ	Աշխատանք տանել դժվար դաստիարակվող երեխաների հետ:	Ուստարվա ընթացքում	ՄԿԱ գծով տեղակալներ Դասղեկներ	
Է	Դաստիարակչական գործընթացի իրականացմանը մասնակից դարձնել ծնողներին,ծնողական խորհուրդներին:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն ՄԿԱ գծով տեղակալներ	
Ը	Դժվար առաջադիմող աշակերտներին, ըստ նրանց ընդունակությունների ու հետաքրքրությունների, ընդգրկել արտադպրոցական	Ուստարվա ընթացքում	ՄԿԱ գծով տեղակալներ Դասղեկներ	

	խմբակներում, ակումբներում:			
թ	Երեխաներին ծանոթացնել դպրոցի ներքին կարգապահական կանոններին, գործող ռեժիմին,ինչպես նաև իրենց իրավունքներին և պարտականություններին: Ստեղծել ջերմ մթնոլորտ:	Սեպտեմբեր	ՄԿԱ գծով տեղակալներ Դասղեկներ	
ա	*2.Աշխատանք ՄՄ նախագահների և դասղեկների հետ* Հրավիրել առարկայական մասնախմբի նախագահների և դասղեկների խորհրդակցություն, պլանավորել նրանց աշխատանքային տարեկան գործունեությունը /հեռավար/ Հանձնարարել դասղեկներին՝ ա/կազմել ուստարվա աշխատանքային պլանը և ներկայացնել հաստատման, բ/լրացնել աշակերտների անձնական գործերը, գ/կազմել հաշվետվություն /տարեվերջին/, դ/կատարել դասալսումներ դասղեկական դասարանում /ուստարվա ընթացքում/, ե/անցկացնել բաց դասղեկի ժամ, զ/կազմակերպել միջոցառում	Օգոստոս	ՄԿԱ գծով տեղակալներ	

բ	Լսել դասղեկների և ՄՄ նախագահների հաշվետվությունները կատարած աշխատանքի մասին, քննարկել հրատապ հիմնահարցեր , տալ համապատասխան հանձնարարություններ. Անհրաժեշտության դեպքում աշխատանքային պլաններում կատարել փոփոխություններ:	Առաջին և երկրորդ կիսամյակի վերջին	Տնօրեն ՄԿԱ գծով տեղակալներ	
գ	Կատարել դասալսումներ՝միջին հաշվով շաբաթական 1 դասղեկական ժամ:Դասալսումները կատարել նպատակային և նույն օրը քննարկել:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն ՄԿԱ գծով տեղակալներ	
դ	Պարբերաբար կազմակերպել բանավեճեր, քննարկումներ, կլոր սեղաններ, որոնք էլ ավելի կնպաստեն աշակերտների ինքնակրթության և հոգևոր մտքի զարգացմանը	Ուստարվա ընթացքում	ՄԿԱ գծով տեղակալներ Դասղեկներ Ուսուցիչներ	
ե	Ուսումնասիրել դասղեկների առաջավոր փորձը և տարածել դպրոցում:	Ուստարվա ընթացքում	ՄԿԱ գծով տեղակալներ	
զ	Ստեղծել «Մասնագիտական զարգացման դպրոց» աշակերտների մասնագիտական կողմնորոշումը ճիշտ	Ուստարվա ընթացքում	ՄԿԱ գծով տեղակալներ Դասղեկներ	

	նպատակաուղղելու համար: • Ամիսը մեկ անգամ դասղեկի ժամը նվիրել ՄԿ-ը • Կազմակերպել «Բաց դասղեկի ժամեր»			
		Հոկտեմբեր		
		«Մասնագիտության ընտրության կարևորությունը»	Մ.Գևորգյան /10Տ1/	
		«Հանդիպում փաստաբանի հետ»	Օֆ.Մայան /10Պ1/	
		Նոյեմբեր		
		«Արժեքներ և շահեր»	Լ.Միրզոյան /11Պ/	
		«Հանդուրժողականություն»	Եվ.Վալեյկո /12Տ1/	
		«Իմ մասնագիտական ակնկալիքները»	Ա.Իսկանդարյան /11Լ/	
		«Ազատություն առանց պատասխանատվության»	Ս.Սահակյան /12Լ2/	
		«Հոչակավոր Չապլինի նամակը դստերը»	Ն.Նալբանդյան /12Լ1/	
		«Մարդկային ամենազնահատելի արժանիքն ըստ իս»	Մ.Շեկոյան /12ՖՄ/	
		«Հանդիպում մասնագետի հետ»	Լ.Ֆ.Թադևոսյան /12Տ2/	
		Դեկտեմբեր		
		«Իմ ապագա մասնագիտությունը»	Վ.Պետրոսյան /10ՖՄ/	
		«Գովազդը և նրա դերը մեր կյանքում»	Կ.Բալիկյան /10Լ/	
		«ՁԻԱՀ-ՄԻԱՎ»-ի դեմ պայքարի օր»	Մ.Ենգիբարյան /11ՖՄ/ Ն.Օհանյան	

		«Գենդերային հավասարություն» «Ծնողների, թե՞ իմ ընտրությունը»	/12Բն/ Լ.Միրզոհան /12Պ/	
		Հունվար		
		«Կիբեռանվտանգություն, անվտանգ համացանց»	Ս.Ավագյան /10Տ2/	
		Փետրվար		
		«Կոնֆլիկտային իրավիճակներ»	Գ.Ժամհարյան /10Պ2/	
		Մարտ		
		«Իմ հայրենիքի հերոսները»	Ն.Օհանյան /11Բն/	
		Ապրիլ		
		«Մարդը և մասնագիտությունը»	Հ.Հովհաննիսյան /10Բն/	
		«Մասնագիտական կողմնորոշում»	Լ.Ս.Թադևոսյան /11Տ1/	
		«Հանդիպում մասնագետների հետ»	Ն.Դանիելյան /11Տ2/	
Է	*Կազմակերպել միջոցառումներ* */Պատասխանատու 10-11-րդ դասարանների դասղեկներ/*	*«Հանդիպում բուժաշխատողների հետ»*	*Հ.Հովհաննիսյան Մարտ /10բնագ./*	
		«Երկրապահի օր»	*Մ.Գևորգյան Մայիսի 8 /10տնտ1/*	
		«Ազգային արժեքներ, արժեքային համակարգ»	*Ս.Ավագյան Ապրիլ /10տնտ2/*	
		«Մայրեր, սրբություն, ամենասուրբ»	*Օ.Մայյան*	

		«Անմահները հրամայում են» «Միրո թեման համաշխարհային գրականության մեջ» «Հանապչենք ինքներս մեզ» «Հիշենք բոլորին անուն առ անուն» «Հանդիպում իրավագետի հետ» «Նշանավոր մարդկանց առաջին սերերը» «Արվեստն ու երաժշտությունը» «Միրո թեման համաշխային գրականության մեջ» «Հանդիպում բուժաշխատողների հետ»	Մարտ-ապրիլ /10ՀՊ1/ Գ.Ժամհարյան Հունվար /10ՀՊ2/ Կ.Բալիկյան Մարտ /10լ/ Վ.Պետրոսյան Հունվար/10ֆմ/ Ա.Իսկանդարյան Հունվար /11լ/ Լ.Միրզոյան Սեպտեմբեր-հոկտեմբեր /11պ./ Լ.Ս.Թադևոսյան Մարտ /11տնտ1/ Ն.Դանիելյան Հոկտեմբեր /11տնտ2/ Մ.Սնգիրարյան Մարտ /11ֆմ/ Ն.Օհանյան Մարտ /11բն./	
	3.Դասղեկական աշխատանք			
ա	Դաստիարակչական պլանի հիմքում դնել սովորողի /որպես անձ, քաղաքացի /համապատասխան գործողությունների, վերաբերմունքի և վարքի	Ուստարվա ընթացքում	ՄԿԱ գծով տեղակալներ Դասղեկներ	

	միջոցով արտահայտվող արժեքային համակարգի ձևավորումը:			
բ	Շաբաթը մեկ անգամ անցկացնել դասղեկի ժամ:	Ուստարվա ընթացքում	Դասղեկներ	
գ	Աշխատանք տանել սովորողների վարքի կուլտուրայի, վարվեցողության նորմերի և կանոնների ապահովման ուղղությամբ:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն ՄԿԱ գծով տեղակալներ Դասղեկներ	
դ	Իրականացնել սովորողների նախասիրությունների բացահայտման և շարունակական զարգացման միջոցառումներ:	Ուստարվա ընթացքում	ՄԿԱ գծով տեղակալներ Դասղեկներ ԴՏ Հոգեբան	
ե	Կիսամյակը 2 անգամ հրավիրել ծնողական ժողով:Ամուր հիմքերի վրա դնել աշակերտ-դպրոց-ընտանիք կապը: Ծնողների համար կարդալ մանկավարժական թեմաներով զեկուցումներ:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն ՄԿԱ գծով տեղակալներ Դասղեկներ	
զ	Սահմանել ուսուցիչների հերթապահություն	Ուստարվա ընթացքում	ՄԿԱ գծով տեղակալ	
է	ԱԽ և ԾԽ կազմի ձևավորում	Սեպտեմբեր	Տնօրեն ՄԿԱ գծով տեղակալներ Դասղեկներ	
	4.Գեղագիտական դաստիարակություն			
ա	Հետևողական աշխատանք տանել աշակերտների գեղագիտական դաստիարակության գործի բարելավման ուղղությամբ: Կազմակերպել՝ ➢ էքսկուրսիաներ, ➢ այցելություններ, ➢ հանդիպումներ, ➢ զրույցներ:	Ուստարվա ընթացքում	Տնօրեն ՄԿԱ գծով տեղակալներ Դասղեկներ	

բ	Սովորողների օգնությամբ ձևավորել շենքի միջանցքներն ու դասասենյակները /վահանակների նորացում/:	Ուստարվա ընթացքում	ՄԿԱ գծով տեղակալներ Դասղեկներ	
գ	Կազմակերպել՝ ✓ «Գիտելիքի և դպրության օր» համադպրոցական միջոցառում ✓ Դասարանական միջոցառում	Սեպտեմբերի 1	ՄԿԱ գծով տեղակալ՝ Օֆ.Մայյան Դասղեկներ	
դ	Կազմակերպել «Ուսուցչի տոն»-ին նվիրված համադպրոցական միջոցառում:	Հոկտեմբերի 5	ՄԿԱ գծով տեղակալներ ԱԽ, ԾԽ	
ե	Կազմակերպել «Գրադարանավարի օր»-վան նվիրված համադպրոցական միջոցառում:	Հոկտեմբեր	ՄԿԱ գծով տեղակալներ *գրադարանավար՝ Ա.Գրիգորյան*	
զ	Համադպրոցական միջոցառման կազմակերպում «Ամանորյա երազանք»թ.	Դեկտեմբեր 23	ՄԿԱ գծով տեղակալներ ԱԽ,ԾԽ	
է	Կազմակերպել «Կանանց տոն»»ին նվիրված համադպրոցական միջոցառում	Մարտի 8	ՄԿԱ գծով տեղակալներ, ԱԽ,ԾԽ	
ը	Կազմակերպել «Վերջին զանգ» «Վերջին դաս» միջոցառումներ:	Մայիսի 26	ՄԿԱ գծով տեղակալ 12-րդ դասարանների դասղեկներ	
	5.Ֆիզիկական դաստիարակություն			
ա	«Առաջին բուժօգնության օր»	Ուստարվա ընթացքում	ՄԿԱ գծով տեղակալներ Ջինդեկ Բուժքույր	

բ	Խստորեն վերահսկել ֆիզկուլտուրայի դահլիճում, լաբորատորիաներում անվտանգության և սանիտարական կանոնների պահպանումը	Մշտապես	Տնօրեն, ՄԿԱ գծով տեղակալներ, ուսուցիչներ	
գ	Բուժաշխատողների միջոցով անցկացնել զրույց սովորողների օրվա ռեժիմի, անձնական հիգիենայի,կորոնավիրուսային հիվանդության տարածումը կանխարգելելու սահմանված կանոնների պահմանման մասին	Ուստարվա ընթացքում	Դասղեկներ Դպրոցի բուժքույր	
դ	Կազմակերպել հանդիպումներ տարբեր մարզիկների,մարզիչների հետ	Ուստարվա ընթացքում	ՄԿԱ գծով տեղակալներ, ֆիզկուլտուրայի ուսուցիչներ դասղեկներ ԾԽ,ԱԽ	
ե	Համադպրոցական միջոցառում«Ծխողների դեմ պայքարի ազգային օր›› թեմայով	Հոկտեմբերի 15	ՄԿԱ տեղակալներ Դասղեկներ /պատի թերթ/	
զ	Կազմակերպել միջոցառումներ նվիրված ՄԻԱՎ /ՁԻԱՀ -ի միջազգային օրվան	Դեկտեմբերի 1	ԱԽ ՄԿԱ գծով տեղակալներ Կենսաբանության ուսուցիչներ դասղեկներ	
	6.Ռազմահայրենասիրական դաստիարակություն			
ա	Կազմակերպել՝ ➢ այցելություն Հայրենական Մեծ պատերազմի զոհերի հիշատակին կառուցված հուշարձան, ➢ խաչքարի մոտ խոնարհում և խնկարկում 44-օրյա նահատակ 11	Մայիսի 9 Սեպտեմբեր 27	ՄԿԱ գծով տեղակալներ Ջինղեկ Դասղեկներ	

	շրջանավարտների հիշատակին ➢ հանդիպումներ 44-օրյա պատերազմի մասնակիցների հետ ➢ այցելություն 44-օրյա պատերազմում զոհված մարտիկների հուշարձաններին	Սեպտեմբերի 27-ից նոյեմբերի 9-ը		
Բ	ՀՀ անկախության օր	Սեպտեմբերի 21	ՄԿԱ գծով տեղակալներ Զինղեկ Դասղեկներ	
Գ	Հանրապետության տոն	Մայիսի 28	ՄԿԱ գծով տեղակալներ Զինղեկ Դասղեկներ	
Դ	Երկրապահի օր	Մայիսի 8	Դասղեկներ	
Ե	Անցկացնել «Քաղաքացիական պաշտպանության օրը դպրոցում» միջոցառումը	Ուստարվա ընթացքում	Զինղեկ	
Զ	Կազմակերպել համադպրոցական միջոցառում «Բանակի օր» թ.	Հունվարի 28	ՄԿԱ գծով տեղակալներ Զինղեկ /10-11-րդ դասարանների աղջիկներ և տղաներ/	
	7.Աշխատանքային դաստիարակություն			
Ա	Կազմակերպել համադպրոցական շաբաթօրյակներ Մասնակցել՝ ➢ համապետական ➢ համայնքային շաբաթօրյակներին	Ուստարվա ընթացքում	ՄԿԱ գծով տեղակալներ Դասղեկներ ՇԽ ԱԽ	
Բ	«Աշխատանքի օր» Դպրոցամերձ հողամասի մշակման, ծաղիկների տնկման և ծառերի խնամքի աշխատանքները կատարել աշակերտների միջոցով, սեր	Մայիսի 1	ՄԿԱ տեղակալներ Դասղեկներ Աշխարհագրության և կենսաբանության ուսուցիչներ ՇԽ,ԱԽ	

	արթնացնել դեպի աշխատանքը			
գ	Դասասենյակների մաքրման աշխատանքների կազմակերպում:	Արձակուրդների ընթացքում	ՄԿԱ տեղակալներ Դասղեկներ	
	8.Հոգևոր դաստիարակություն			
ա	Հանդիպում քահանայի հետ Եկեղեցական տոներին այցելություն եկեղեցի՝ • Խաչվերաց • Թարգմանչաց • Սուրբ Սարգիս զորավարի հիշատակության օր • Սուրբ Վարդանանց տոն • Սուրբ Զատիկ • Ծաղկազարդ	Ուստարվա ընթացքում	ՄԿԱ տեղակալ Հայ եկ.պատմ. ուսուցիչներ Դասղեկներ ԱԽ,ԾԽ	
	9.Քաղաքացիական, բարոյական դաստիարակություն			
ա	Կազմակերպել Քաղաքի օրվան նվիրված միջոցառում /տեսահոլովակների ցուցադրում/ և մասնակցություն համաքաղաքային միջոցառմանը	Հոկտեմբեր	ՄԿԱ զծով տեղակալներ Դասղեկներ ԱԽ ԾԽ	
բ	Մարդու իրավունքների միջազգային օր	Մարտի 23		
գ	Երկրաշարժի զոհերի հիշատակի օր	Դեկտեմբերի 7	Դասղեկներ	
դ	Ցեղասպանության զոհերի հիշատակի օր	Ապրիլի 24	Դասղեկներ	
ե	Հանդիպում ԴՏ հետ	Ուստարվա ընթացքում	ՄԿԱ տեղակալ	
զ	Ընտանիքի օր	Մայիսի 15	ՄԿԱ տեղակալներ Դասղեկներ ԾԽ,ԱԽ	

է	Համայնքային խնդիրների վերհանում, առաջարկների ներկայացում և մասնակցություն	Ուստարվա ընթացքում	Ախ	
ը	Համագործակցություն ՀԿ-ների հետ	Ուստարվա ընթացքում	Ախ Ուսուցիչներ	
թ	Մասնակցություն ծրագրերի և մրցույթների /առարկայական , ոչ առարկայական/	Ուստարվա ընթացքում	Ուսուցիչներ աշակերտներ	

ՄԿԱ գծով տնօրենի տեղակալներ՝ Մ.Գևորգյան Օ.Մալյան

1.09.2022թ.